Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Ագարակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Ֆիզիկա» /8 դասաժամ/, «Գերմաներեն» /42 դասաժամ/, «Քիմիա /6 դասաժամ/, «Բնագիտություն» /2 դասաժամ/ և «Պատմություն» /23 դասաժամ, որից «Հայոց պատմություն» 13 դասաժամ, «Համաշխարհային պատմություն» 8 դասաժամ և «ՀԵՊ» 2 դասաժամ/ առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **2023 թ. սեպտեմբերի 11-ից մինչև սեպտեմբերի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00**-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. սեպտեմբերի 28-ին՝ ժամը 12:00-ին**, Ագարակի միջնակարգ դպրոցում, հասցե՝ ք. Ագարակ, Չարենցի 21/1: Տեղեկությունների համար զանգահարել 077 74 58 90 հեռախոսահամարով: